



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՃԱՌ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՎԳՈՒԵԱՆՑ



Ի ՎԵՆԵՏԻՎ

Ի ՎԱՆԾ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1858 — ՌՅԷ

2002

373  
—  
Ա-78







Ճ Ա Ռ





*M. Zwick. Christoph. Weymüller*



73  
78  
պր.



# ՃԱՌ

ԶՈՐ ԱՍԱՅ ՎԱՐԺԱՊԵՏ

ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՅ

Ի ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՈՅ

ՀԱՅԿԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ

ՈՐ Ի ԿԱԼԿԱԹԱ



## Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1858 — ՌՅԷ

8530




123

5195  
38

Զառաջիկայս ճառ մտադիր յօժարութեամբ  
տամբ 'ի վայելս հասարակաց , ոչ միայն զի ըզ-  
մերոյ մտերմի եւ զկարեւոր բարեկամի՝ զպա-  
րոն Յովհաննու Ավդալեան աշխարհալուր հըռ-  
չակեսցուք զվաստակսն զովելիս 'ի զարդացումն  
եւ 'ի բարգաւաճանս հայերէն զպրութեանց ,  
այլ զի 'ի նորուն նախանձաւորութիւն յորդո-  
րամիտ արասցուք եւ զայլս :

Տ Պ Ա Գ Ր Ո Ղ Ք Ն




Օսկիբ և զայս, զի զիս քե և ամենայն շեզոք  
գովեսցեն յայն բարի, որ ոչ է առ իս, հողմոց հընչ-  
մոռեք վարկանիս. և քե պարաստեք որ՝ և զատի  
յայն ինչ, որ ՚ի մտացս խղճեք ոչ զատիս՝ ոչ փոյր  
ինչ առնեմ: Իսկ քե յորոցն ոռնիս՝ և ստեք որ,  
ոչ վասն ստերոյն, այլ վասն ոռներոյն վշտանամ:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Faint, illegible text at the top of the page.

Main body of faint, illegible text, possibly a list or series of entries.



Յարգոյ Մթուակալ եւ Մնդամք ժողովոյս, յորոց ոչ սակաւք էք նախկին աշակերտք իմ, աղաչեմ ներել համարձակութեանս և ունկնդիր լինել երկայնատութեամբ բանից իմոց: Յորժամ բաղդատեմ զթիւն 1825՝ յորում ամի սկիզբն արարի պաշտօնի վարժապետութեան իմոյ՝ ի հայկեան Մարդասիրական Ղեմարանի՝ ընդ այժմեան թուոյս 1858, գոհութիւն և փառս նուիրեմ բարձրելոյն Մտուծոյ սակս անպատում բարերարութեան նորաբանսի յայնժամ բազումք ՚ի ձէնջ աշակերտէիք ինձ ՚ի տղայական հասակի, և ես

վարժապետէի ձեզ 'ի տիս պատանեկու-  
թեան՝ լի եռանդեամբ Հայկական զրազի-  
տութեան և ուսումնասիրութեան : Յայն-  
ժամ դուք յինէն երկնչէիք , իսկ այժմ ինձ  
'ի դէպ է երկնչել 'ի ձէնջ : Վանի մեծ է  
ինձ խնդութիւնս տեսանել զձեզ աստ Վն-  
դամս ժողովոյ ազգային Վարժարանի եւ  
պիտանի Վնդամս Հասարակութեան մե-  
րազնէից , եւ զիս տակաւին 'ի նմին իսկ պաշ-  
տօնի մանկավարժութեան , թէ եւ յան-  
ժամանակ սպիտակութենէ հերաց գլխոյս  
ըստ երեւութին 'ի ծերութիւն համակեալ :  
Ս' մեծի եւ զարմանալի փոփոխութեանս :  
Թէ որչափ մեծ է բերկրութիւն սրտիս ընդ  
այս յեղափոխութիւն ժամանակացս , ոչ  
կարեմ բանիւ ճառել . այլ զայս եւեթ կա-  
րեմ խոստովան լինել , զի ձեռն քաղցր Վ-  
մենակալին է՝ որ ետ մեզ տեսանել զօրս  
զայս . եւ արժանացոյց զմեզ այսպիսի տե-  
սարանի ժողովոյս :

Յորժամ մտի 'ի Ն'եմարանս յայս յամի  
1825 , թէ զինչ ինչ դասառական գրեանս  
ընթեռնուին մանկունքն , զանուանս մատե-  
նիցն այնոցիկ գրեալ ունիմ 'ի յատուկ տետ-  
րակի օրագրութեան իմոյ . զոր չէ հարկ



յայսմ վայրի յառաջ բերել: Իսկ յետ  
այնորիկ թէ յինչ ինչ մատեանս դասառու-  
թեան սլարապեցան նորին, նաեւ զնոցունց  
անուանս գրեալ է իմ ուրոյն: Եւ աւանիկ  
ցարդ իսկ գոն 'ի Ղեմարանի աստ թարգ-  
մանութիւնք աշակերտաց այնր ժամանա-  
կի. այսինքն՝ Սեթայ (Յարութիւն Մ. քա-  
րեան, Մնանիայ (Յակովբեան եւ այլոց ո-  
մանց:

Եւստելով զթարգմանութեանց՝ եկն 'ի  
միտս իմ Նայերէն ձեռագիր մատեանն՝  
զոր Սպարապետն Սայկս՝ կառավար պա-  
տուելի Մնկերութեանն Մրեւելեան Նընդ-  
կաստանի՝ տուեալ է մերումս զուարթա-  
ծաղիկ բժշկին՝ Սարգսի Մ. Շ իրխօռեան,  
մինչ էրն սա 'ի Ղոնտոն, առ 'ի թարգմա-  
նել զխորագիր նորին, եւ կամ տալ զհա-  
մառօտ ծանօթութիւն ինչ զմատենէն:  
Եւս ձեռնագիր մատեան՝ որպէս երեւի եւ  
որպէս հաւանեալս եմ՝ է գործ իմաստա-  
կի ուրումս՝ ընծայեալ վրիպակաւ մերումս  
Մնանիայ Շիրակացոյ՝ որ ծաղկեցաւ 'ի

<sup>1</sup> Colonel Sykes, a Director of the Honorable East India Company.

Հայս յեօթներորդ դարուն . մատեան 'ի վերայ աստղագիտութեան եւ քաղղէութեան' կամ վեցհազարեկի : Այս մատենի առաջին մասն' եթէ ուղիղ իցէ այս իմ վարկած' գտանի աստ առ Պարոն Աստուծոյ Յ. Աստուծոյ : Եթէ մերս Սարգիս ոչ է կարողացեալ ինքնին թարգմանել կամ իմանալ զխորագիրն , եւ կամ համառօտիւ տալ տեղեկութիւն ինչ զմատենէն , եւ այսպէս ստիպեալ 'ի հարկէ' դիմեալ է յօգնութիւն Սերապատուելի Հ. Աստուծոյ (Թեոֆիլոս 'ի Սարգիս , այն չէ իւր մեղք , եւ ոչ պակասութիւն ինչ Սարգասիւրական Նեմարանին մերոյ' ուր նա զառաջինն ուսաւ զսկզբնատարերս Հայկական եւ Մեղիական լեզուագիտութեան : Ա' ( խօսել կամ մեղով ըստ մերումն աշխարհիկ բարբառոյ ) բաւրբակ գգելոցց նոր պոճեղ էր եւ հասեալ էր մինչեւ ցհոլովառու նախագրութիւնսդ՝ յայս կոյս , յայն կոյս , 'ի վեր կոյս , 'ի վայր կոյս , յառաջ կոյս , յետկոյս , եւ այլն : Ահա հազիւ էր նա 'ի հասակի չորեքտասան ա-

<sup>1</sup> Astrology and Sorcery որ ռամիկ բարբառով կոչին ֆալցոքիւն եւ ջադոքարոքիւն :

մաց, յորժամ հայր նորին՝ հանգուցեալ Պարոն Միքայէլն՝ յառաւօտու միում բերեալ զնա ընդ իւր՝ ի տուն մեր՝ ասաց. Աղբայր Ալտալ, Սարգսին բերէլամ ձեռք պաչի, մտածէլամ Ղեմարանիցն իւրն հանել, եւ տալ ՚ի Ղեմարանն բժշկականութեան՝, որ դաքտօուութիւն սովորի:

Սպատուելի Մնդամբ ժողովոյս, յիրաւի արդի անշքացեալ վիճակ Սարգասիրական Ղեմարանի մերոյ ցաւոց եւ արտասուաց է արժանաւոր. եւ ո՞րք յազգասիրաց եւ ՚ի հայրենասիրաց ոչ ցաւեսցի ընդ անշքութիւն ազգային Սարժարանին՝ որ է մայր գթած<sup>1</sup> կարօտաւոր անխնամ անտերունչ անտուն լքեալ հայ մանկտւոյն: Սայց դուք ինքնին գիտէք զի Ղեմարանս ոչ եթէ միշտ էր այնպէս անփառունակ որպէս այժմս տեսանէք: Յուշ լիցին ձեզ աւուրքն՝ փառաւոր աւուրքն՝ յորժամ արքայական բարձրութիւնն հենրիկոս՝ ծիրանածնունդ արքայորդին հոլլանդայ<sup>2</sup>, եւ մեծապատիւ Վեսպանն Վաղ-

<sup>1</sup> Medical College.

<sup>2</sup> Alma Mater.

<sup>3</sup> His Royal Highness, Henry, Prince of Orange.

ղիոյ՝, եւ Ղաւտաւորն Մաղրասայ<sup>2</sup>, պատուամատոյց այցելութեամբ իւրեանց ընդ ժամանակս ժամանակս մեծարեցին զՂեմարան մեր ազգային: Յուշ լիցի ձեզ եւ ճառն՝ զոր ընթերցաւ ուսումնասէր աշակերտ մեր՝ Վարապետ (Տուլին) արդ փոխեալ ՚ի կենցաղոյս՝ ՚ի պատիւ բարձրագոյն Մըքայորդւոյն ՚ի դիմաց կառավարչաց եւ աշակերտաց Ղեմարանիս: Յուշ լիցին ձեզ եւ բանքն՝ զոր խօսեցաւ ՚ի հանդիսի այցելութեան անդ իմաստուն Հենրիկոս Տարրէնս՝ նախապատիւ ՚ի քաղաքական ծառայութեան, որ ուղեկից եւ ընկերակից էր Ղեսպանին Վաղղիոյ: Տաղումք ՚ի ձէնջ ներկայ էիք աստ յայնմ աւուր այցելութեան սոցա, եւ կարէք յուշ ածել զոր ինչ ասաց բաղմահանձար եւ մեծանուն Մնդղիացիս այս յատենաբանել իւրում վասն ազգային տանս եւ վասն հայկական Վարժապետին՝ խոնարհ եւ անձնանուէր Տես-

<sup>1</sup> His Excellency, M. Lagrene, Ambassador from France.

<sup>2</sup> Sir W. W. Burton.

<sup>3</sup> Henry Torrens, high in the Civil Service.

չին ձերոյ՝ Վեներեբեան՝ որք լուան զբանս  
գերիմաստ ականաւոր Վնգղիացւոյն՝ կարեն  
վկայել ճշմարտութեանն։ Եւ թէ զինչ  
ատենաբանեաց ծերունի հանձարեղ Վա-  
տաւորն Վադրասայ՝ այն ամենայն խօսք  
ատենաբանութեան նորին յիշատակա-  
գրեալ եւ տպագրեալ պահին յերկաթի  
արկեղ Վարժարանիս՝ հանդերձ իսկական  
ձեռնադրութեամբ ատենաբանին՝ ի ծանօ-  
թութիւն զինեաց։

Վ յարգոյ Վնգամբ ժողովոյս եւ աշա-  
կերտք մեր պատուելիք, յորժամ յամի 1825  
յարեցայ՝ ի Ղեմարանս յայս իբրեւ դասա-  
սաց հայ մանկտւոյն, այնքան ջերմ եւ հը-  
զօր եր ի խորս սրտի իմոյ եռանդն ուսու-  
մնասիրութեան եւ մշակութեան հայկա-  
կան գրագիտութեան, մինչ բովանդակ ոսկ-  
ւոյն եւ արծաթոյ Վալիփորնիայ եւ նորոյն  
հոլանդայ, մինչ բովանդակ ականցն պա-  
տուականաց Վողգոնդայ եւ Վրազիլայ,  
մինչ բովանդակ մարգարտացն Սէյլանայ  
եւ Վահրինայ երեւիլ յաչս իմ իբրեւ հող  
եւ մոխիր, եւ իբրեւ ճնչին, փանաքի եւ

<sup>1</sup> Your humble and devoted Rector.

<sup>2</sup> Sir W. W. Burton.

խոտան ինչ առ բաղդատու թեամբ՝ իմու մս  
 սրտի ըղձալի եւ փափաքելի՝ պաշտօնի ման  
 կավարժութեան : Արու՛մ հոլանի են ամե  
 նայն գործք եւ անգործք մարդկան՝ նա զի  
 տէ եւ տեսանէ՝ ՚ի բարձանց , եւ դուք եւս  
 գիտէք՝ ո՛ր Վարոնայք ժողովոյս՝ եւ կարէք  
 խղճի մտօք վկայել , զի ՚ի յանձն առնուլ  
 իմ զայս պաշտօն դասասացութեան , ո՛չ մե  
 ծութեան ցանկացայ եւ ոչ փարթամանա  
 լոյ ակնկալայ : Ա՛յմարիտ է զոր ասեմս , ար  
 դարեւ ճ՛յմարիտ : Կան եւ այլք ՚ի վերայ  
 աշխարհի՝ ինձ նման : Օ՛յս ոչ ոք յողջա  
 մտաց կարէ ուրանալ : Կարձեալ կրկնեմ ,  
 ոչ մեծութեան ցանկացայ եւ ոչ փարթա  
 մութեան : Ընխօս վկայ այսմ՝ սակաւա  
 պէտ կենցաղավարութիւն իմ : Կիտէ Տէրն  
 եւ դուք եւս գիտէք եւ կարէք վկայել , զի  
 բազում անգամ շահաւէտ գործք եւ գեր  
 ընտիր եւ պատուական պաշտօնք հրաւիրե  
 ցան եւ յանդիման եղեն ինձ , այլ ես զմը  
 տաւ ածեալ զ՛Նեմարանս զայս՝ ոչ միում  
 եւ ոչ միւսում ՚ի սոցանէ ցանկացայ : Ըն  
 նայն եռանդագին իղձք եւ ցանկութիւնք  
 սրտիս ամիսփեալ էին ՚ի պաշտօն վարժա  
 պետութեան եւ մշակութեան հայկական

գրագիտութեան 'ի Վարդասիրական Ղեմարանի աստ . առ որ սիրտ իմ հակել հակեր միշտ իբրեւ զմագնիսացեալ սլաքն կողմնացուցին դէպ 'ի բեւեռն հիւսիսային : Եւ այս ազգային տուն՝ սիրտ իմ էր այնպէս կցորդ եւ լծորդ՝ որպէս առն ամուսնացելոյ ընդ կնոջ : Եւ յի, արդարեւ սաստիկ եւ անկեղծաւոր եղեւ սէր իմ առ Վարժատունս այս . եւ եթէ ոչ երեւեսցի յաչս ձեր չափազանցութիւն՝ համարձակիմ ասել զի սէր իմ սաստկագոյն եռանդեամբ իւրով առ Ղեմարանս այս՝ յաղթեաց սիրոյն : Եւ յիստորիկաբար առ Վաւիթ : Եւ եթէ պէտեւ երրորդ մասն ժամանակի դարու միոյ էանց 'ի բաց 'ի կենաց իմոց 'ի 1825 թուոյ անտի, սակայն հաւատացէք ինձ, ո՞ր Վարդնայք, զի եւ ոչ կայծ մի երբէք չիջաւ 'ի բորբոքմանէ եռանդեան ուսումնասիրութեան իմոյ : Եւ եթէ հնարինչ լինէր՝ հակադարձ յետադարձ շրջանաւ ժամանակի՝ դարձեալ 'ի նորոյ սկսանիլ 1825 թուոյ, ես եւս նովին եռաբորբոք եռանդեամբ ունէի դարձեալ վերստին աննուազ հրճուանօք սկսանիլ զպաշտօն վարժապետութեանս եւ զաշխատանս մշակութեան հայկական Վրագիտութեան :

Վստիցի զքեզ ընկեր քո, եւ մի քո բե-  
 րան, ասէ Իմաստունն: Չափաւորութիւնն  
 ոչ թոյլ տայ ինձ գովել զանձն իմ. այլ ես  
 ոչ կարեմ զճշմարտութիւնն իբրեւ զճրագ  
 ծածկել ընդ գրուանաւ: Յընթացս անցեալ  
 երեսուն եւ երից ամաց բազում տաղան-  
 դաւոր եւ ականաւոր աշակերտք ելին՝ ի Ղե-  
 մարանէ աստի՛ ուսեալք կրթեալք հրա-  
 հանգեալք ընդ դաստիարակութեամբ մե-  
 րով. յորոց շատքն կենդանի են եւ ոմանք  
 մեռեալք: Ընաւել հանձարեղքն եւ երեւե-  
 լիքն՝ ի միջի սոցա յայտնի են ամենեցուն:  
 Օ անուանս սոցա չկամիմ աստ մի ըստ միո-  
 ջէ յիշատակել, քանզի ինքեանք իսկ լռե-  
 լեայն անխօս քարոզք են արժանեաց եւ  
 գրաւոր արգասեաց իւրեանց, եւ ՚ի ծանօ-  
 թից իսկ եւ յանձանօթից մատամբ ցու-  
 ցանին եւ գովին ամենայն ուրեք: Ի դասուց  
 անտի աշակերտաց մերոց երեքն են այժմ  
 քահանայք. ոմանք են ՚ի Պինանգ, ոմանք  
 ՚ի Սինկափուր. կէսք ՚ի Սալա եւ այլք ՚ի  
 Բարմա. ոմանք ՚ի Պարսկաստան եւ ոմանք  
 յԱրագ Մրաբի. եւ ոչ սակաւք եւս ՚ի  
 կողմանս կողմանս վերին եւ ստորին հրնդ-  
 կաստանի: Ալ աստ իսկ յայսմ մայրաքա-



զաքի գրեթէ երրորդ մասն հասարակու-  
 թեան մերազնէից են աշակերտք մեր, յո-  
 րոց ոմանց որդիք եւս նոյնօրինակ մեզ աշա-  
 կերտեալք. ամենեքեան բարեացապարտ,  
 բարետենչ, բարեհամբաւ տանուտեարք եւ  
 վաճառականք. ամենեքեան բարեսէր հայ-  
 րենասէր պատուելի Պարոնայք. ամենե-  
 քեան պիտանի եւ մեծարոյ անդամք հա-  
 սարակութեան: Բնդ այս զուարճացեալ  
 բերկրեալ հրճուի սիրտ իմ իբրեւ ընդ բու-  
 րաստան ծաղկալից եւ գեղածիծաղ: Աւր  
 թողցուք եւ զուսումնասէր, զհամբաւա-  
 տենչ եւ զականաւոր պատանին՝ զՄկր-  
 տիչ Ամինեան. զոր յամի Տեառն 1828  
 ըստ իւրումն յատկական խնդրոյ եւ հաւա-  
 նութեամբ եւ ծախուք բարեյիշատակ հա-  
 նուոյ իւրոյ՝ Տիկին Թանկուամի Ամինեան՝  
 յղեցի ՚ի Մոսկով ընդ ճանապարհ աշ-  
 խարհին Շուետաց: Ըստ գրասէր, հայ-  
 րենասէր եւ պատուական պատանի այժմ  
 եղեալ Պարոն անուանի՝ իւրովք իսկ բարի  
 ջանիւք եւ աշխատանօք ծաղկեալ բարգա-  
 ւաճի ՚ի նախկին մայրաքաղաքին Ռուսաց  
 իբրեւ հեղինակ պէսպէս մատենից եւ մե-  
 ծապատիւ հրամանատար վերատեսուչ Ը-

13

ընկերան Ղեմարանին պայազատ տոհմին  
 Վազարեանց :

Յորժամ եբարձ Տէր զտէրն իմ 'ի գըլ-  
 խոյ իմմէ յամի 1833, մնացի ես միայնակ  
 եւ անմխիթար 'ի խորս տրտմութեան : Վ  
 դուձս անկեալ արտասուօք խնդրեցի 'ի  
 Տեառնէ եւ ասացի . Յոյց ինձ ճանապարհ  
 յոր գնացից : Վնդրեցի դարձեալ պաղա-  
 տանօք, եւ Տէր կատարեաց զխնդիր իմ :  
 Վնդրեցէք, եւ տացի ձեզ՝ ձայնէ բանն տէ-  
 րունի : Բստ հաւատոյ իմոյ տուաւ ինձ  
 խնդրեալն իմ : Արկին հոգի տեառն իմոյ  
 աներեւոյթ իմն զօրութեամբ հանգեաւ 'ի  
 վերայ իմ . ոչ հոգի մարգարէութեան եւ ոչ  
 հոգի հրաշագործութեան՝ որում մեղսա-  
 մած մեղսամակարդ մահկանացու հողա-  
 ծինս ոչ եմ արժանի : Աչ ասեմ զմաշ-  
 կեակն Վղիայի՝ որ 'ի հնումն հանգեաւ 'ի  
 վերայ Վղիսէի . ոչ . այլ հոգի խոնարհու-  
 թեան եւ հոգի բարոյականութեան ար-  
 դիւնաշատ բազմերախտ Վարժապետին եւ  
 բարերարին իմոյ՝ Յարութիւնի Վալու-  
 ցեան Վլդոկիացւոյ՝ (Սօխաթցւոյ) հե-  
 զահամբոյր առն բարւոյ եւ խոնարհի եւ  
 յաւերժական յիշատակաց արժանւոյ . այնր՝

ընդ որոյ ձեռամբ սնայ եւ զօրացայ . այնր՝  
 որոյ քաղցր բնաւորութեանն ցանկացեալն  
 էի ես 'ի մանկութենէ իմմէ . այնր՝ զորով  
 գիրկս արկեալ եւ փարեցայ 'ի հասանել  
 իմում յարբունս հասակի : Օսա կալայ  
 ինձ ուղեցոյց եւ առաջնորդ 'ի ծովու կեն-  
 ցաղոյս այսորիկ : Օսա կալայ ինձ ղեկա-  
 վար ճարտարապետ՝ որ միշտ հեռի եւ մե-  
 կուսի կացոյց զլաստ նաւուս 'ի վտանգաւոր  
 ժայռիցն Վարիբդեայ եւ Ալիւղեայ : Օսա  
 կալայ ինձ իբրեւ զՎ. թեւաս՝ որ միշտ զերծ  
 պահեաց զիս 'ի հնարիցն Աիրկեայ եւ նմա-  
 նեաց դորա : Օսորա յամենայն դէպս ըզ-  
 հետ ընթացայ . արդարեւ զսորա խրատուցն  
 զհետ ընթացայ եւ ոչ երբէք ստրջացայ .  
 եւ ցորչափ շունչ իմ յիս է , ոչ ստրջացայց ,  
 այլ յաւիտեան երախտագիտութեամբ օրհ-  
 նեցից զյիշատակ նորա : Վիտէք դուք , ո՛  
 Վարոնայք , եւ ունիք վկայել զի յընթացս  
 ասպարիզի վարժապետութեան իմոյ կալայ  
 զշաւիղ իմոյս Վարժապետի : Մնդ ամե-  
 նեսին խոնարհութեամբ գնացի . ընդ մե-  
 ծաց , ընդ միջակայնոց եւ ընդ փոքունց :  
 Մնդ ամենայնի ամենայն եղէ : Մնդ առն  
 ամբժի՝ ամբիծ եղեալ . ընդ ընտրեալսն՝

ընտրեալ. իսկ ընդ թիւրսն՝ ոչ թիւրեալ :  
 Մանկանցն ձերոց սիրելեաց զնոյն աստուած  
 ծաճաճոյ ճանապարհ խոնարհութեան եւ  
 բարիոք վարուց ցուցի : Ասուցի նոցա ընդ  
 լեզուագիտութեան եւ զաստուածապաշտու-  
 թիւն : Ասուցի նոցա սիրել զԱստուած,  
 երկնչել ՚ի թագաւորաց, ծառայել հայրե-  
 նեաց, հնազանդիլ ծնողաց, օգնել ազգայ-  
 նոց, սուրբ պահել զօր շաբաթուն՝ որ ՚ի  
 մեզ կիւրակէ, պարապիլ ընթերցուածոց  
 սուրբ Վրոց յաւուրս կիւրակէից հանդերձ  
 այլովք մասամբք բարոյականութեան եւ ա-  
 ռաքինութեան : Օ այս առնելով կատարե-  
 ցի զպարտականութիւն իմ, զոր իբրեւ ըզ-  
 լուծ եղ Վստուած ՚ի վերայ պարանոցի ան-  
 արժանիս եւ ապիկար ծառայիս : Յուսամ  
 եւ ակն ունիմ զի եթէ ոչ աստ առաջի  
 մարդկան, գոնեա անդ առաջի ահաւոր բե-  
 մին ունիմ պարզերես լինել իբրեւ ծառայ  
 անպիտան եւ մշակ առանց ամօթոյ, եւ փո-  
 խանակ եղծանելի պսակին՝ զոր աշխարհս  
 տայ կամ ոչ տայ՝ անեղծութեան պսակին  
 լինել արժանի ըստ առաքելական բանի : Վս-  
 տանօր քաղցր եւ վայելուչ է ինձ երկրոր-  
 դել զոր միանգամ ասացն Սոկրատ . Աթէ

ումանք յաշակերտաց մերոց զոյգ ընդ ուսման գրոց ծծեալ զկաթն առաքինութեան՝ եղեն առաքինի եւ բարեմարդիկ, իսկ այլք ընդ հակառակն մոլեկանին զհետ զակատեալ ախտի՝ անկղիտացան՝ ի վարս անուղղայս եւ խառնագնացս, վասն այսպիսեացն ասեմ զի ոչ բարելաւութիւնք առաքինեացն ինձ գրեսցին, և ոչ յոռութիւնք մոլեացն ինձ տացին՝ որոց ոչ եղէ պատճառ, քանզի մարդս ազատ ստեղծաւ՝ ի կամս իւր՝ ի սկզբանէ արարչութեան յամենիմաստ եւ յամենախնամ՝ Վարդէն տիեզերաց :

Սիշտ է ինձ ասել, եւ յասել իմում զայս լիճք լուսոյ աչացս յաղբերաց սրտիս բերեղանան արտասուօք, ցաւելով ասեմ զի յաւուրս վարժապետութեան իմոյ ի հայկեան Սարգասիրական Ղեմարանի աստ կրեցի զբազմօրինակ հակառակութիւնս, տառապանս եւ նեղութիւնս : Աւ զարդեօք յաստի կեանս զերծ մնաց ի հակառակութեանց եւ ի նեղութեանց . յորս իբրեւ յօրօրոցի յար ի շարժման կայ այս աշխարհ : Վրք հոյակապք եւ բազում առաւելութեամբք գերագոյնք քան զիս՝ ընդ դարս դարս եւ ի տեղիս տեղիս՝ որպէս յայտ-

նէ մեզ պատմութիւնն տիեզերական՝ յա-  
 լուրս իւրեանց կրեցին զվիշտս եւ զնեղու-  
 թիւնս ՚ի նախանձորդաց : Մարդս ծնեալ  
 է առաւել ՚ի կրել՝ քան ՚ի վայելել յաշ-  
 խարհի աստ՝ ասաց որ ասացն ՚ի հնումն :  
 Մի թէ Սոկրատ չունէր զիւրն Վարիկդէս  
 եւ զՄելիտոս : Մի թէ Վրիստիդէս՝ ար-  
 դարապէս յորջորջեալն արդար (կամ Վի-  
 կէոս) յանիրաւի ոչ անկաւ ընդ խեցեկոյտ  
 վճռով՝ Վթենացւոց : Մի թէ օրապահաս  
 գեղջուկն այն սոպո՝ որ ոչ ճանաչէր զՎի-  
 կէոս եւ ոչ էր կրեալ զմասս ինչ ՚ի նմանէ՝  
 ոչ էարկ ՚ի խեցեկոյտն զխեցի իւր՝ մակա-  
 դրեալ իբրեւ զիւրն քուէ ձեռամբ արդա-  
 րոյն : Վ. յո՛, էարկ զիւրն խեցի, վասն զի ա-  
 տելի էր նմա անուն արդարոյն : Օ՛ ՚ի որ  
 ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լի-  
 նել, ասէ մերս Նդիշէ : Ամ ըստ այլոյ ու-  
 թումն իմաստասիրի՝ Ար ոչ ունի յինքեան  
 զառաքինութիւն ինչ, բազում անգամ նա-  
 խանձի ընդ առաքինութիւնս այլոց : Մի  
 թէ Աոպերնիկոս, Աոդոմբոս եւ Վալիլէոս  
 Վալիլէյի չունէին զօխերիմ նախանձորդս

<sup>1</sup> Ostracism.

եւ զհակառակորդս յաւուրս ժամանակաց  
 իւրեանց : Այն անպակաս եղեն ՚ի սոցունց  
 թշնամիք եւ թշնամու թիւնք : Մի թէ ոչ  
 նեղեցան եւ վշտացան սոքա ՚ի բովս վշտաց ,  
 տառապանաց եւ տուայտանաց : Այն վշտ-  
 տացան եւ համբերեցին . համբերեցին հո-  
 գւով չափ : Հակառակորդք նոցա բարձան  
 եւ անհետ եղեն ՚ի միջոյ : Այլ ճշմարտու-  
 թիւնն իբրեւ ձէթ թէ եւ առ ժամանակ  
 մի բռնի ստորասոյզ լեալ ՚ի յատակս ծո-  
 վու ՚ի բռնութենէ խաւարասիրին՝ ընդոստ  
 ՚ի վեր եկն եւ եկաց յերեսս ջուրց : Աստ  
 սմին օրինակի եւ ես՝ թէ եւ յաչս մարդ-  
 կան տանջեցայ , թէ եւ յանընդհատ թըշ-  
 նամու թենէ հակառակորդաց տառապեցայ ,  
 թէ եւ ՚ի քրայս հալոցաց վշտաց տուայտե-  
 ցայ առ ժամանակ մի , սակայն յոյս իմ լի  
 է անմահութեամբ ըստ բանի խմաստնոյն ,  
 եւ ես հաւատով յուսացեալ եմ ՚ի յոյսն  
 մեր ամենեցուն՝ ՚ի Վրիստոս Յիսուս , զի  
 եթէ արժէք երկար ժամանակեայ վաստա-  
 կոցս եւ քրտանցս ոչ ծանիցին եւ վարձա-  
 արեցին աստ ըստ արժանւոյն , գոնէ ՚ի  
 հանդերձելումն պսակեցին անեղծանելի  
 սպական յարդարադատն Աստուծոյ :

Թէ զինչ եւ որքան վարձ տուաւ ինձ 'ի  
 Ղեմարանէ աստի վասն եւ փոխարէն ծան-  
 րաբեռն եւ դժուարաքիրտն վաստակոցս ,  
 այն յայտնի է ձեզ՝ ո՛վարոնայք ժողովոյս :  
 Քարձրագոյնն եւ առաւելագոյնն էր 300  
 ուլիք , թէ եւ փա՛ռք Քարերարին՝ դտա-  
 նին 'ի մէջ աշակերտաց իմոց ոչ սակաւք՝ ո-  
 րոց ամսական եկամուտն երկիցս , երկիցս ,  
 չորիցս եւ բազմօք առաւելագոյն է քան ըզ-  
 վարձ իմ վերոյասացեալ : Մսացի եւ դար-  
 ձեալ կրկնեմ զի բարձրագոյնն էր միայն 300  
 ուլիք՝ որ տուաւ ինձ 'ի վարձ մանկավար-  
 ժութեան : Մ. յլ այս՝ որպէս գիտէքդ՝ ոչ  
 'ի սկզբանն եւ ոչ յամենայն ժամանակի :  
 Մ. յլ եւ 'ի վարձէ աստի իմմէ խզեցաւ՝ յետ  
 երեսուն ամաց ծառայութեանս՝ մասն մի 'ի  
 միում նուագի , եւ դարձեալ մասն մի յայ-  
 լում նուագի : Մնդէր կամ ո՛յր աղագաւ :  
 Ի պատճառս նուագութեան եւ անբաւա-  
 կան լինելոյ ամսական հասից Ղեմարանին :  
 Տարայ ես այսմիկ լռիկ անխօս անամուռնչ  
 երկայնամտութեամբ՝ փառս նուիրելով Տեա-  
 ռն : Տանիմ այդմ եւ այժմ նոյնօրինակ  
 համբերութեամբ առանց տրտունջ ինչ ու-  
 նելոյ զումեքէ : Համբերութիւնն անդուստ



'ի բնութենէն բնաւորեցաւ 'ի մարդկու-  
 թեանս առ 'ի համեղացուցանել եւ ա-  
 նուշացուցանել զդառինս մեր ըստ զօրու-  
 թեան տիրացոյց փայտին՝ որով քաղցրա-  
 ցաւ դառնութիւն ջուրցն Սեռայ յաւուրս  
 Սովսիսի : Այ տրտնջեմ ես եւ ոչ մեղա-  
 դիր լինիմ վասն այսր՝ ոչ սմա եւ ոչ դմա :  
 Սի ոք 'ի ձէնջ՝ 'ի ներկայից կամ 'ի բա-  
 ցակայից՝ կարծեսցէ թէ ինքեան կամ նմա  
 վերաբերին բանքս այսոքիկ . քաւ լիցի . օն  
 անդր , 'ի բաց տար : Ախտանձ եւ հա-  
 կառակութիւն խռովեցոյց զթագաւորու-  
 թիւնս , ըստ ասացելումն բանի . եւ եթէ  
 ես յարեցից աստ , թէ երկոքին դժոխայ-  
 ին կապոյտ դեւքս այսոքիկ երկիցս խզե-  
 ցին զվարձ խոնարհ եւ անմռունչ Ար-  
 ժապետիս՝ բազմաշխատ ծառայիս ձերոյ՝  
 ընդ այս զինչ զարմանք : Սի զարմանայք  
 ընդ այս , այլ ընդ անտրտունջ համբե-  
 րութիւն իմ զարմացարուք : Օայս ա-  
 սելով մի կարծէք դուք , ո՛ր Արոնայք , թէ  
 ազահ եմ ես կամ զօշաքաղ , եւ կամ թէ  
 ախտ ազահութեան խլրտի 'ի սրտի իմում .  
 քաւ լիցի : Յայտնի է ձեզ ծանրութիւն  
 առտնին ծախուց քաղաքիս . եւ էր լիցի ինձ

երկայնաբանել զայսմանէ : Հաւատացէք  
ինձ՝ չեմ ազահ, չեմ եւ հրեշտակ, չեմ  
հրեղէն, չեմ հողեղէն. այլ հաւասար ձեզ  
մարդ եմ եւ բնութենակից ձեր՝ անկեալ  
ընդ կարեօք մարմնոյ յայսմ աղցաւոր աշ-  
խարհի : Այելուչ է ինձ աստանօր զՏե-  
րենտիանոսին երկրորդել զգեղեցիկ ասա-  
ցուած՝. Մարդ եմ, եւ զմարդկայիևսն յի-  
նէն ոչ ինչ օտար հարմարիւմ : Այս բան  
շարժել շարժեաց զհռովմայեցի ունկըն-  
դիրսն, որք թէպէտ եւ արտաքնոցն գիտու-  
թեամբք ճոխացեալք՝ տակաւին՝ ի խաւա-  
րի աստուածանգիտութեան թարթափէին :  
Աթէ այս բան ազդեաց ուժգնակի՝ ի սիրտս  
նոցա՝ որք զուրկ էին ի լուսոյ յայտնու-  
թեանն՝ մի թէ եւ զսիրտս ձեր ոչ շարժեա-  
ցէ ի կարեկցութիւն վասն հինաւուրց ե-  
րախտաւոր Արժապետին ձերոյ : Վի-  
տեմ զի ցաւիք ի սրտի ընդ այդ իմ դժ-  
բազդութիւն : Վիտեմ զի ճշմարիտ կա-  
րեկցութեամբ ցաւակից էք ընդ ձերդ  
հաւատարիմ ծառայի : Վիտեմ զի քրիս-  
տոնէական ազնիւ զգացողութեամբ սիրտք

<sup>1</sup> Homo sum, humani nil a me alienum puto.

ձեր ճմլին ընդ անհրաժեշտ կրկնակի խը-  
 զումն վարձու աղղային վաստակաւորին ձե-  
 րոյ : Հաւաստի եմ, զի եթէ կամք իցեն  
 ձեզ, յոյժ դիւրին է ձեզ դնել սպեղանի 'ի  
 վերայ վիրացս, օգնել ինձ, հասանել 'ի թի-  
 կունս իմ, եւ ուրախ առնել զթառամեալ  
 թարշամեալ լքեալ վհատեալ սիրտ իմ :  
 Յորժամ մեծանուն քաղաքավարն Վթե-  
 նայ՝ Վերիկղէս, որ էր մին յականաւոր եւ  
 'ի նախապատիւ աշակերտացն Վնաքսագո-  
 րայ, գնաց 'ի տեսութիւն եւ 'ի կարեկցու-  
 թիւն վարժապետին 'ի յետին սաստիկ նե-  
 զութեան նորին՝ Վնաքսագորաս յոգւոց  
 հանելով ձայնեաց առ նա . Վերիկղէս՝ որք  
 կարօտ իցեն լապտերի, իւղ արկանեն 'ի նա :  
 Վյսպէս եւ դուք՝ ո՛ պատուելի Վարոնայք  
 եւ ազնիւ աշակերտք իմ, եթէ սիրէք ըզ-  
 Վարժապետ ձեր եւ կամիք մխիթարել զնա  
 'ի վիշտս նորին եւ ուրախ առնել զսիրտ նո-  
 րա, իւղ արկէք 'ի լապտեր նորա : Վարե-  
 հաճութեամբ յառաջ մատիք եւ լցուցէք  
 զթերին արդար վաստակոց նորա՝ որ խղե-  
 ցաւն 'ի նմանէ . եւ նա զրկեցաւ . . . Վրդար  
 է Տէր եւ զարդարութիւն սիրէ : Վորձք  
 արդարութեան հաճելի են նմա իբրեւ ըզ-

պատարագն Վ.բելի եւ առաւել քան զող-  
ջակէզս գառանց պարարտաց, զոր 'ի հնումն  
մատուցանէին ստուերական օրինացն պաշ-  
տօնեայք :

Չէ ինչ 'ի ձէնջ անծանօթ՝ ո՛ր Պարո-  
նայք ժողովոյս՝ զի յաւուրս ժամանակաց  
վարժապետութեան իմոյ ոչ է իմ գտեալ  
կամ տեսեալ ուստեք կամ յունեքէ զօգ-  
նականութիւն . այլ բազմիցս եւ յաճախա-  
կի կրեալ է իմ զդժուարութիւնս, եւ յան-  
դիման լեալ են ինձ խոչք եւ խուժք՝ որոց  
միայնակ յաղթելն գրեթէ հաւասար էր  
միում յերկոտասան շահատակութեանցն  
հերակլեայ : Վ.յո՛ դէպ եղեն ինձ յոգնա-  
դիմի դժուարութիւնք, որք բազմօք խոչըն-  
դակն եւ խոչընդոտն եղեն ինձ 'ի պաշտօնի  
իմում : Վ.թէ ունէի ինձ օգնական, եւ կամ  
եթէ հասանէր ինձ օգնութիւն, զորմունս  
Ղեմարանիս այսորիկ կարէի յոսկի փոխար-  
կել ողորմութեամբն Վ.ստուծոյ : Օ.այս՝ մի  
Ֆիզիքական կամ նիւթական, այլ բարոյա-  
կան եւ իմացական մտօք իմացարուք : Ուամ-  
կօրէն ասի, մի ձեռն ծարի չի տալ . նաեւ՝  
ձեռն ձեռ կըռնուայ, եւ երկոքեան յետ  
կըռնուան երես կըռնուան : Յայտնի է

ձեզ ամենեցուն, զի յաւարտ իւրաքանչիւր  
 ամի կազմեցաք զհանդէս տարեկան հար-  
 ցաքննութեան մանկանց Նեմարանիս :  
 յայտարարութիւնս տպագրեցաք . հրաւի-  
 րականս յղեցաք . շրջաբերական թուղթս  
 տարածեցաք . այլ ցաւիմ ասել զի հրաւի-  
 րեալքն ոչ եկին 'ի հանդէսն . անսխալ թե-  
 ղեն զազգային ուսումնարանէն . զանց արա-  
 ըին զմեօք . արհամարհեցին զվաստակս մեր .  
 լքուցին զսիրտս վաստակաւորացս որ զծան-  
 րութիւն աւուրն բարձաք եւ զտօթ : Մն-  
 զէր : Վասն զի սէր հայկական գրագիտու-  
 թեան նուազելով նուազեցաւ 'ի միջի մե-  
 րում յայսմ քաղաքի . վասն զի սկսան ան-  
 պիտան, անշահ եւ ումպէտ համարիլ զգի-  
 տութիւն լեզուին հայոյ . վասն զի՝ ասա-  
 ցին՝ քահանայ եւ վարդապետ ոչ ունին  
 դառնալ մանկունք մեր : Մնգղիական լե-  
 զուն գեր 'ի վերոյ ամբարձեալ : Մնգղիա-  
 կանն լոկ պիտանի, շահաւէտ եւ հարկաւոր  
 երեւեալ : Մնգղիականն միայն զհաց եւ  
 զապրուստ հայթհայթեալ : Մնգղիապա-  
 րութիւնն՝ իբրեւ մղձաւանջ տիրեալ է 'ի

21

<sup>1</sup> Anglomania.

վերայ սրտից ամենեցուն : Մնգղիագարու-  
 թիւնն իսպառ ցամաքեցուցեալ է զաղբիւրս  
 սիրոյ մայրենի լեզուագիտութեան եւ Հայ-  
 կական գրագիտութեան : Մնգղիագարու-  
 թիւնն գրեթէ դատարկացոյց թափուր կա-  
 ցոյց զՂեմարան մեր յաշակերտաց , եւ Հա-  
 սոյց իջոյց զայն մինչեւ ցյետին անշքու-  
 թիւն : Սիտանաւորութիւն Մնգղիական  
 լեզուին յայսմ աշխարհի՝ ուր Մնգղիացւոց  
 է տէրութիւն եւ Մնգղիացւոց է նոյնգու-  
 նակ ամենայն քաղաքական գործառնու-  
 թիւն՝ քաջայայտ է ամենեցուն : ( ) այս ես  
 ոչ ուրանամ . եւ իբրեւ զառած ինչ ան-  
 ժխտելի՝ ոչ որ յողջամտաց ուրանալ կա-  
 րէ զայն : Այ՛, ա՛ ժտիմ խոստովանիլ զի որ ոչ  
 գիտէ Մնգղիարէն աստ՝ ի Ռիտանական  
 Հնդկաստանի , է միականի : Ա՛ ի ակն ու-  
 նի նա եւ ոչ զերկուս՝ որ անգէտ է Մնգ-  
 ղիական լեզուի : Այլ ուրեմն արդարա-  
 նան որք միանգամ ցանկալ ցանկան ուսա-  
 նիլ զլեզուն Մնգղիացւոց . այո՛ արդարա-  
 նան նորին այսուիկ ցանկութեամբ եւ ոչ  
 որ կարող է մեղադիր լինել նոցա վասն այսր :  
 Այց մինչ սիրեն եւ պատուեն զՄնգղիա-  
 րէնն , ոչ պարտին ատել եւ անարգել ըզ-

Հայերէնն : Օ Անգղիականն ուսցին իբրեւ  
 զՏարկաւոր լեզու . ուսցին եւ զՀայկականն  
 իբրեւ զմայրենի լեզու : Առկ գիտութիւն  
 առաջնոյն ոչ առնէ զՀայն Անգղիացի : Առկ  
 գիտութիւն վերջնոյն ոչ առնէ զնա պիտա-  
 նի քաղաքացի : Ասկ գիտութիւն երկոցունցն  
 առնէ զնա պատուելի , եւ յամենայն քա-  
 ղաքական դործառնութիւնս պիտանի եւ  
 երեւելի : Ապա ուրեմն յուսանին Անգղիա-  
 րէն՝ չպիտի ՚ի բաց թողուլ կամ արհամար-  
 հել զՀայերէնն : Ամ լաւ եւս ասել՝ ըստ  
 տէրունեան բանի՝ զայս արժան է առնել ,  
 եւ զայն չթողուլ : Տինա , որպէս ասէ Աա-  
 րուս Տինգերորդ՝ , Արչափ լեզուս գիտէ ոք  
 խօսիլ , այնչափ անգամ եւս մարդ է նա :

Օ արթիր քերթողահայրդ մեր Աով-  
 սէս , զարթիր եւ ողբա՛ զայլազգասէր բարս  
 Հնդկահայոց , զի զանց զմայրենի լեզուաւն  
 արարեալ իբրեւ զանպիտանաւ եւ զանար-  
 գաւ՝ զՏետ լինին այլազգականին : Աղբա՛  
 զտարադէպ հանգամանս ժամանակին , զի  
 զիւրեանցն ատեն եւ զօտարին սիրեն . զիւ-  
 րեանցն անարգեն եւ զօտարին յարգեն :

<sup>1</sup> Charles the fifth.

Տես դու զայս ամենայն եւ ողբա զողբալի վիճակ մեր, որպէս յառաջնումն ողբացեր զաղէտս Հայոց ազգին :

Օ զարթիր Մ.րամ, քաջդ քաջ արանց, մեծդ դիւցազանց, զարթիր եւ զարմացիր զարմանս ընդ զարմանալի յեղափոխութիւն ժամանակացս . զի յոսկեղէն դարու անդ տէրութեան Հայկազանց անպարտելի զօրութեամբ եւ արիութեամբ յաղթեցեր ազգաց օտարաց . եւ սաստիւ հրամայեցեր պարտելոցն ընդ քեւ ազանց զի խօսեսցին 'ի լեզու Հայոց : Իսկ այժմ՝ յաւուրս մեր՝ սերունդք քո աստ 'ի Հնդիկս անսաստ գըտեալ հրամանի քում՝ զլեզուն Հայոց՝ իբրեւ զանպիտան եւ զխոտան արհամարհեն, եւ օտարին զհետ լեալ՝ գիրկս արկանեն անձկանօք :

Մ.րի արիդ Հայկ՝ նախապատիւ նախահայրդ մեր հասարակաց՝ քաջանուն նահապետդ ազգիս Հայոց, վեհդ մազդեղանց, արի եւ հիացումն հիացիր ընդ անկարծելի փոփոխութիւն դարուցս . զի դու աստուածային փառացն նախանձախնդիր լեալ՝ բարձեր 'ի միջոյ զխրոխտացեալ այլազգին ըզրէլ՝ զերծ եւ մեկուսի կացուցանելով զսե-



ըունդս քոյ յաղխազուր լեզուէ նորա : Աւանդեցեր զկնեաց զլեզու մաքուր եւ աստուածային : Իսկ այժմ աստ յաչս շրնդկահայոցնուազիլ նուազեցաւ յարգ եւ պատուականութիւն լեզուի քոյ , եւ այլ իմն լեզու եղեւ առ նոսա պատուելի եւ յարգելի :

Ահա այս է այժմեան վիճակ մեր հասարակաց : Ահա այս են այժմեան հանգամանք Ղեմարանիս : Ահա այս է եւ վիճակ ձերդանձնանուէր Արժապետի : Աթէ ոչ էր աջ Ամենակալին ընդ իս եւ 'ի վերայ իմ , 'ի վաղուց հետէ անհետ լեալ էր իմ յաշխարհէ՝ իբրեւ զփոշի կամ իբրեւ զհիւլէս ընդ օդս ցնդեալ՝ 'ի ծանրութենէ բազմօրինակ դժուարութեանց , խոչից եւ խութից՝ որք կարեօք հասին 'ի վերայ իմ յամենայն կողմանց՝ յաջմէ եւ յահեկէ , 'ի ներքուստ եւ արտաքուստ : Արտաքոյ մարտք , եւ 'ի ներքոյ արհաւիրք : Աթէ անօթն ընտրութեան ոչ եղեւ զերծ յայսպիսեաց՝ ես անարժանս առ 'ի լինել նորա հետեւակ կամ ստուեր՝ զիա՞րդ ակնկալայց անցաւ անխուով վիճակի : Չիք ինչ տարակոյս , զի յետ ամենայնի՝ որ էանց զինեւ եւ զգլխով իմով՝ բար-

ձեալ էր իմ յաստեացս 'ի լքմանէ եւ 'ի վհատութենէ սրտիս, եւ ոչ ունէիք տեսա-  
 նել զիս այսօր 'ի միջի ձերում, եթէ ոչ էր  
 բարերարն պահապան լեալ մեղուցեալ ծա-  
 ոայիս: Այլ փառք անպատում ողորմու-  
 թեան Ամենակալին, զի դեռ եւս կամ կեն-  
 դանի եւ 'ի Ղեմարանի աստ իբրեւ Ար-  
 ժապետ զկնի զերեսուն եւ զերիս ամս ծա-  
 ոայելոյ: Այլ ուրեմն իրաւանամ գոչելով  
 աղաղակել առ Տէր եւ ասել. Անցաք մեք  
 ընդ հուր եւ ընդ ջուր, եւ հաներ զմեզ 'ի  
 հանգիստ:

Հայեցարուք, աղաչեմ, յազգային տունս  
 յայս՝ հաստատեալն 'ի բարեյիշատակ նախ-  
 նեաց ձերոց, զորոց զանուանս ոչ կարեմ 'ի  
 միտ ածել կամ արտասանել առանց խո-  
 ըին ակնածութեան եւ երախտագէտ յար-  
 գութեան: Հայեցարուք յայս տեղի աստա-  
 տանի՝ որ ասպնջականն է որբոց եւ անխնամ  
 մանկանց: Հայեցարուք եւ զմտաւ ածէք թէ  
 որպիսի սաստիկ զնտակահարութեւ գնտա-  
 կակոծութեան ենթակայ եղև այս Արժա-  
 տուն ընդ ժամանակս ժամանակս յերեսաց  
 անմիաբանութեան, նախանձու եւ հակա-  
 ոակութեան: (Վ) շնամիք առն՝ ընտանիք իւր:

Նառոյն ասացին՝ վայտատն հատանէ ըզ-  
 քեզ . պատասխանեաց՝ մեղեխն յինէն է :  
 Եթէ ընդ թերթս թերթս բազմահատոր  
 ազգային պատմութեան մերոյ թարթա-  
 փեսցուք , զճճմարտութիւն վաղնջուց առա-  
 կիս այսորիկ գրեթէ ամենայն ուրեք գրտ-  
 ցուք : Եթէ վերին աներեւոյթ զօրութիւնն  
 ոչ պահպանէր զտունս զայս , անթիւ գրն-  
 տակքն՝ որովք որմունք սորա ընդհարան եւ  
 բաղխեցան՝ անտարակոյս ունէին փլուզա-  
 նել եւ կործանել զսա իբրեւ զամուր բերդն  
 Սալակոֆայ որ 'ի Սեբաստապօլ : Եւ  
 հազարիցս եւ բիւրիցս փառք Եւնակալին ,  
 զի Նեմարանս այս դեռ եւս կայ կանգուն .  
 եւ հայրենասէր ջանիւք եւ նպաստիւք ձե-  
 րովք ունի անշարժ մնալ յակաստանի , եւ  
 որ ըստ օրէ պայծառանալ արդեամբք եւ  
 գործակցութեամբ հայրենասիրաց :

Բազում ինչ եւս ունիմ ասել ձեզ , ո՛ր  
 Պարոնայք , այլ տեսանեմ զի սիրտք ձեր ոչ  
 հանդարտին , եւ ոչ կարեն ժոյժ ունել եր-  
 կարութեան բանից : Ասան որոյ եւ ես չկա-  
 մելով ձանձրոյթ ինչ պատճառել ձեզ՝ ա-  
 խորժիմ վերջ տալ գրութեանս յայսմ  
 վայրի : Օայս եւեթ հարկաւոր համարիմ

յաւելուլ, զի լուեալ է իմ զառաջադրու-  
թիւն ձեր առ 'ի հաստատել վասն իմ  
ցորչափ կենդանի իցեմ՝ եւ տալ ինձ զթո-  
շակ կամ զհասոյթ՝ վասն երկարժամանա-  
կեայ անընդհատ վաստակոց իմոց 'ի հայ-  
կեան Սարգասիրական Ղեմարանի աստ :  
Գովեմ զբարի դիտումն ձեր, եւ շնորհա-  
կալ եմ յոյժ վասն շնորհաց ձերոց . այլ  
համարձակիմ ասել զի ողորմութեամբն  
Մատուծոյ դեռ եւս ունիմ զկարողութիւն  
անձին, եւ կարող եմ վաստակիլ եւ աշ-  
խատիլ եւ ծառայել պատուելի ազգին ի-  
մոյ զքանի մի ամս եւս : Ըստ է փափաք եւ  
ցանկութիւն իմ : (1) Եւ այն ժամ ամենեքեան  
եմք մահկանացուք, եւ Մատուած միայն է  
յաւիտենական, սակայն հաւատացէք ինձ  
հաւաստեալ, ո՞ր Պարոնայք, զի յաւէտ իմն  
փափաքելի եւ ցանկալի է սրտի իմում մե-  
ռանիլ ընդ լծով պաշտօնի վարժապետու-  
թեանս 'ի Ղեմարանի աստ՝ ուր հերք գրլ-  
խոյս սպիտակացան, ուր ծաղկափթիթ գա-  
րուն կենացս փոխեցաւ 'ի տերեւաթափ ա-  
մանակ աշնայնոյ, ուր բազմաթիւ մանկունք


<sup>1</sup> Pension.

սիրելիք ինձ որդիացան, ուր հարիւրաւորաց  
 պատանեաց եւ պարմանեաց ազգիս ես հայ-  
 րացայ: Արդ կարեմ ես ՚ի բերկրութենէ  
 սրտիս ասել, Ահաւասիկ ես եւ մանկունք  
 իմ, զորս ետ ինձ Աստուած: Փառիաք եւ  
 ցանկութիւն սրտիս է կնքել զկեանս իմ  
 իբրեւ Արժապետ, կամ որպէս հասա-  
 րակապէս ասի Անգղիացիս՝ “So die in  
 harness”, եթէ այս կամ այսպէս իցեն կամք  
 վերին Տեսչութեանն՝ որ տնօրինէ զամե-  
 նայն յօգուտ արարածոցս համայնից: Այլ  
 ես աստանօր զգերահռչակ Աթենացի ի-  
 մաստասիրին եւ վարժապետին կրկնեցից  
 զբան: Յայս վայր խօսեցեալ՝ ազգային սի-  
 րով անվեհեր ապաստան առնեմ զանձն  
 իմ ձեզ եւ Աստուծոյ:

Ի ԿԱԼԿԱԹԱ

Ի Հայկեան Մարդասիրական Ճեմարանի,

յ12 Յուլիսի, յամի Տեառն 1858:



20514

2013







